



2000թ. հունվարի 25. Լույս տեսավ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» ժողովածուն՝ 17 հրատարակական մամուլ ծավալով: Կենտրոնի համարային նվիրել էր ԳԱԱ Գնագիտության և ազգագրության ինստիտուտի 40-ամյակին: Ժողովածուն բացվում է հանդեսի անդամներին շնորհավորանքի քերականությամբ, ամենադրական կարծիքներով ու իրատեսական գնահատանքով, նաև հետազայի անկեղծ բարեմադրություններով: Ակադեմիկոս Գ. Ջահուկյանը գրում է. «Անչափ ուրախ եմ, որ Գյումրիում սկսել է տպագրվել մի գիտական ամսագիր, որն իր հարուստ բովանդակությամբ և պատշաճ ծնակորումով պատիվ կբերի ցանկացած մայրաքաղաքային գիտահետազոտական օջախի: Շիրակի նորաստեղծ հայագիտական կենտրոնի համար սա հսկայական հաջողություն է»: «Ինձ մեծապես ուրախացնում է... որ այն լույս է տեսնում իմ սիրելի Գյումրիում, որ այնքան կարոտ է գիտական և մշակութային կյանքի ու մտքի հարստացման» (ակադեմիկոս Լ. Գալստյան), «այս դրժվարին պայմաններում սա գիտական սիրանք է՝ ի նպաստ հայագիտության զարգացման» (պատմա-գիտության դոկտոր Ա. Քալանթարյան), «... որոշ հրապարակումներ հայագիտության բնագավառում բոլորովին նոր խոսք են, ցանկանում են տեսնել հաջող համարները ևս» (ակադեմիկոս Գ. Ղազարյան): «Դանդաղ է, դրու է բանասիրության դոկտոր Ա. Գարությունյանը, այն կդառնա Շիրակի հայագիտական մտքի կազմակերպիչն ու նրա հասուն մակարդակի արտացոլման ճշմարիտ հայելին»:

Ժողովածուի 2-րդ հատորում տեղ են գտել ԳԱԱ ԵՊՀ կենտրոնի, Գնագիտության և ազգագրության, Արվեստի ինստիտուտների գիտաշխատողների (20), Երևանի պետական համալսարանի և Գյումրու մանկավարժական ինստիտուտի դասախոսների (4), նաև մեկ ֆրանսիացի գործընկերոջ գիտական հոդվածներ, հրապարակումներ և հաղորդումներ, որոնք գերազանցապես վերաբերում են Շիրակին և արծարծում են նրա հարուստ պատմության, հնագիտության, վիճագրության, մարդաբանության, բանահյուսության, ազգագրության, երաժշտական ու ճարտարապետական մշակույթի, էթնո-սոցիոլոգիական և այլ հիմնախնդիրներ: Գրապարակվել են հայերենագիտական, հուշագրական բնույթի, ինչպես նաև Սեծն Կոմիտասի ծննդյան 130-ամյակին նվիրված հոդվածներ և հաղորդումներ: Ժողովածուի 2-րդ հատորն ավարտվում է հրապարակված ողջ նյութի համառոտ անգլերեն ամփոփումով:

Գատորն իր ինքնատիպ կառուցվածքով և բովանդակությամբ կարևոր ներդրում կհանդիսանա շիրակագիտության բնագավառում, Շիրակը (և ոչ

միայն) ուսումնասիրող հայագետները նրանում իրենց համար օգտակար ոչ քիչ նորություններ կըգտնեն: Գատորի հրատարակությունը կենտրոնի իրականացրել է իր աշխատակիցների նվիրատվություններով, մասամբ նաև՝ Արևելյան Եվրոպայի Կաթողիկե Դոյոց առաջնորդ, Ար. Ղազարի Գայկական Ակադեմիայի անդամ, Գերաշնորհ Գ. Ներսես արքեպիսկոպոս Տեր-Ներսեսյանի հովանավորությամբ:



2000թ. փետրվարի 14-ին ԵՊՀ Կենտրոնը և Երևանի պետ. կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղը համատեղ կազմակերպել էին Տեսողականության խորհրդանշական հանդիսություն: Ընթացքում ներկայացված որոշ սովորույթներ, աղբյուրություններ արտացոլում էին ծեսի հետ կապված ժողովրդական պատկերացումները: Գնագիտության ժամանակ հնչած բանահյուսական կատարումներն ունեին ընդգծված ժխական խորհուրդ: Կատարվեց նաև ժխական խարուկի արարողություն՝ ավանդական երգ-երաժշտության ուղեկցությամբ: Գնագիտությանը մասնակցեցին բազմաթիվ հյուրեր, ուսանողներ, որոնք նաև կատարվածի գործուն մասնակիցներն էին:



2000թ. մարտի 17-ին ԳԱԱ ԵՊՀ կենտրոնի նախաձեռնությամբ Գյումրիում կազմակերպվեց գիտական սեմինար, որտեղ «Աշակույթ և քաղաքակրթություն հասկացությունները արդի գիտության մեջ» զեկուցումով հանդես եկավ պ. գ. բ. Գ. ԳԱԱ Գնագիտության և ազգագրության ինստիտուտի դիտաշխատող, «Ոստան» էթնոմշակութաբանական հետազոտությունների կենտրոնի նախագահ Յու. Սկրտունյանը: Անմիջապես հետաքրքրություն էր առաջացրել Գյումրու գիտական հասարակության և ուսանողության շրջանում: Գիտական սեմինարի աշխատանքներին իրենց մասնակցությունը բերեցին նաև Գ. ԳԱԱ Գնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն պ. գ. դ. Ա. Քալանթարյանը, ԵՊՀ ազգագրության ամբիոնի վարիչ, պ. գ. բ. Գ. Խառատյանը, ազգաբաններ, պատմագիտության բեկնածուներ Կ. Սեդրոսյանը, Ա. Թադևոսյանը և այլք:

Ընտրված թեման չափազանց արդիական է հումանիտար գիտություններով և հատկապես պատմագիտությամբ զբաղվողների համար: Բանախոսը մշակութաբանության բնագավառում հայտնի հետազոտողներից է և քաղաքացիական և քաղաքակրթական ու մշակութաբանական ժամանակակից տեսական հիմնախնդիրներին: Ներկայացնելով քաղաքակրթության մարքսիստական ֆորմացիոն տեսության համեմատությունը ժամանակակից մոտեցումների հետ, Յու. Սկրտունյանը մասնավերապես նշեց, որ այժմ անհրաժեշտ է գիտական ուսումնասիրություններ կատարելիս և տիպաբանական մոդելները մշակելիս հենվել քաղաքակրթական մոտեցումների վրա: Քաղաքակրթական մոդելի հիմքը մարդն է, որը կերտում է այն ի տարբերություն ֆորմացիաների, որտեղ գլխավորը նյութական զարգացման փուլերի հաջորդականությունն է:

վրոհ հետազոտող քաղաքակրթության ներ-
սում շոտանմանում է հետևյալ շերտերը:

1. Մարտը ոնտանիքում: Նրա ընդունակություն-
ները, կարողությունները, գիտելիքները, կամքը
հատկանիշներ, որ հնարավորություն են տալիս
զոռնել և ստեղծագործել:
2. Արտագրության տեխնոլոգիական եղանակ-
ները, տեխնիկական հնարանքները:
3. Արտագրության տնտեսական եղանակը (սե-
փականության ձևերը, փոխանակում, բաշխում):
4. Սոցիալ-քաղաքական կարգը (սոցիալական
հարաբերություններ, էթնիկ հարաբերություններ,
քաղաքական և իրավական կապեր):
5. ասարակական գիտակցություն (հոգևոր աշ-
խարհ, գիտություն, կրթություն, բարոյականու-
թյուն, զաղափարախոսություն և կրոն, մենթալի-
տետ):
6. Բնական և էքոնոմիկային միջավայրեր:

Այնուհետև բանախոսը տիպաբանեց քաղա-
քակրթություններն ու առանձնացրեց դրանց
տարբերությունները:

1. Լեռնիթի քաղաքակրթություն-անցում արտա-
դրող տնտեսաձևի,
2. Վաղ ստրկատիրական քաղաքակրթություն,
3. Անտիկ քաղաքակրթություն,
4. Վաղ ֆեոդալական քաղաքակրթություն,
5. Նախահնդուստրիալ քաղաքակրթություն,
6. Ինդուստրիալ քաղաքակրթություն,
7. 1970-ական թ. ք. հետինդուստրիալ քաղաքա-
կրթություն:

Բացի վերը բերված տիպարանական համա-
կարգից գոյություն ունի նաև այլ մոտեցում:

1. Քաղաքակրթության բնական տիպ-յուբացնող
տնտեսաձև,
2. Արևելյան քաղաքակրթություն-որոշակի կեն-
սածն խարհամատիկ կոլեկտիվիզմ, պետություն
իշխում է հասարակության վրա, մշակութային
զարգացումն ընթանում է դանդաղ:
3. Արևմտյան քաղաքակրթություն-արժեքների
այն համակարգը, որին բնորոշ է շուկայական
տնտեսության զարգացումը, ինդուստրիալ հա-
սարակությունը, մարդու ազատությունն ու ինդի-
վիդուալիզմը:

Ձեկուցումից հետո սկսվեց մտքերի աշխույժ
փոխանակություն, որին մասնակցեցին Գյումրու
մտավորականության և բուհական ուսանողու-
թյան ներկայացուցիչներ:

2000թ. ապրիլի 23-ին ԵՀԴ կենտրոնը
երևանի Կոմիտասի անվան պետական կոնսեր-
վատորիայի Գյումրու մասնաճյուղի հետ համա-
տեղ, Արվեստների Ակադեմիայի դահլիճում կազ-
մակերպել էի համդիտություն, նվիրված Ար. Ջա-
տիկի տոնին: Երդաշնակ միասնության մեջ
ներկայացվեց տոնի ծիսական ընդհանուր պատ-
կերը ժողովրդական հավատալիքներից, մինչև
քրիստոնեական սրբազան խորհուրդը: Ձատկա-
կան ձվերի կոմպոզիցիաներով զարդարված
դահլիճում հոգևոր խոսքով հանդես եկավ Երա-
կի թեմի առաջնորդական տեղապահ, ծայրա-
գույն վարդապետ Մ. Աբապահյանը, ապա հաջոր-
դեցին Հարության աղերի և շարականների կա-
տարումներ:

Տոնի ժողովրդական նկարագիրը ներկայաց-
վեց ծիսական պարերով ու երգերով, ուտեստ-
ների և այլ հավատալիքների ներդաշնակ միա-
նականությամբ: Հանդիսությունը եզրափակվեց

զատկական խաղերով: Հանդիսության ազգային
ժշգրիտ նկարագրի ստեղծմանը աջակցել էր
հմուտ ազգագրագիտ Ժ. Խաչատրյանը:

Բացի ԵՀԴ Կենտրոնի աշխատակիցներից և
կոնսերվատորիայի ուսանողներից դահլիճում
ներկա էին նաև քաղաքի այլ բուհերի և ուսում-
նական հաստատությունների սովորողներ, որոնց
անմիջական մասնակցությունն ու բուռն արծա-
զանքը համահունչ էր օրվա խորհրդին:

Հանդիսության բուն նպատակը ազգային հնա-
վանդ տոնի կենսունակության հաստատումն էր:



Ապրիլի 28-ին
Գյումրին մեծ շուքով
նշեց հայ մեծանուն
լեզվաբան, Դր. Աճառ-
յանի անվան լեզվա-
բանության ինստի-
տուտի տնօրեն, գի-
տության վաստակա-
վոր գործիչ, «Աբ. Մես-
րոպ Մաշտոցի շքա-
նշանի» ասպետ, ք. գ. դ.
պրոֆեսոր, ակադեմի-
կոս Գևորգ Ջահուկյա-
նի ծննդյան 80 և գի-
տա - մանկավարժա-
կան գործունեության
55 ամյակը:

Մեծարանքի հանդիսությանը, որի կազմակերպի-
չը Երևանի հայագիտական հետազոտություն-
ների կենտրոնն էր, մասնակցում էին Գյումրու և
Երևանի մարզի գիտության, մշակույթի, կրթու-
թյան և այլ բնագավառների բազմաթիվ ներկայա-
ցուցիչներ, հոգևոր գործիչներ, անվանի հայա-
գետների մի մեծ խումբ երևանից՝ Գիտություն-
ների ազգային ակադեմիայի փոխ-պրոֆեսոր
Վ. Բարխուդարյանի գլխավորությամբ, Գյումրու
բուհերի հարյուրավոր ուսանողներ, մեծաթիվ
մտավորականներ:

Հանդիսությունը ներածական խոսքով բացեց
ԵՀԴ կենտրոնի տնօրեն Ա. Հայրապետյանը: «Ինչ-
քան էլ ելած է գյումրեցու սիրտը և հոգին՝ վիրա-
վոր, - իր խոսքում նշեց նա, - սակայն դիտության ու
մշակույթի նկատմամբ նրա սերն առաջվա նման
անպակաս է, նվիրումը՝ անմնացորդ, և այդ սերն
է, որ այստեղ է բերել այսքան մարդկանց՝ իրենց
երախտիքի խոսքն ասելու մի անձնավորության,
որի ողջ կյանքը անմնացորդ նվիրում է հայրե-
նական գիտությանը, իսկ վատակը այն համ-
ընդհանուր սերն ու հարգանքն է, որ արժանիորեն
վայելում է այսօր հայագիտության մեծ երախտա-
վորն ու անխոնջ մշակը»: Ապա նա անդրադար-
ժավ այն ծանրակշիռ գիտական ձեռքբերում-
ների, որ ունի համաշխարհային ճանաչման
արժանացած հայ լեզվաբանը ոչ միայն հայերի-
նագիտության, այլև ընդհանուր լեզվաբանական
արդի մի շարք հիմնախնդիրների լուծման մեջ:
Վերջում բոլոր գյումրեցիների անունից, «Իսկ
Գյումրիում Ձեզ շատ-շատերն են սիրում,
մաղթում են քաջառողջություն, որպեսզի Ձեր
բարի սիրտը, ուսանելի աշխատասիրությունն ու
աստուծուց պարգևաված տաղանդը նոր արժեքա-
վոր և մնայուն երկասիրություններ պարգևեն
մեզ», - ասաց զեկուցողը:

Այնուհետև ելույթ ունեցան և մեծավաստակ լեզվաբանին ազնիվ գնահատանքի ու ջերմ մաղթանքի խոսքեր հղեցին ԳԳԱ փոխ-պրեզիդենտ Վ. Բարխուդարյանը, Գյումրու Ա. Լալաբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա. Սեյրոնյանը, Երևանի պետ. համալսարանի հայոց լեզվի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Լ. Եզեկյանը, ժուռնալիստիկայի ֆակուլտետի ղեկավար պրոֆեսոր Գ. Անանյանը, ԵՊՀ կենտրոնի գիտքարտուղար Գ. Խաչատրյանը, Երևանի մարզպետարանի մշակույթի վարչության պետ Գ. Կիրակոսյանը, Երևանի կինոյի և թատրոնի ինստիտուտի Գյումրու մասնաճյուղի տնօրեն, թատերագետ Լ. Մուրաֆյանը, «Պրոգրես» համալսարանի դասախոս Լ. Գինոսյանը, ԿՄԲ օտար լեզուների ամբիոնի դասախոս, բ. գ. դ. Ա. Դովիանցիսյանը, ԵՊՀ լեզվաբանության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Լ. Դովսեփյանը, «ԱՆ. Երևակացի» համալսարանի դասախոս Ա. Խաչատրյանը, Մատենադարանից՝ բանասիրության դոկտոր, պրոֆ. Գ. Ամալյանը և ուրիշներ: Ընթերցվեց նաև Սրևելյան Եվրոպայի Կաթողիկե Դայոց եկեղեցու առաջնորդ Գերաշնորհ Գ. Ներսես արքեպիսկոպոս Տեր-Ներսեսյանի շնորհավորագիրը, որում վերջինս քաջառողջություն էր մաղթում իր մեծ բարեկամին՝ ընդգծելով «հարգարժան պրոֆեսորի, բազմահմուտ լեզվաբանի հսկա վաստակը գիտության ամրաստանում» և ի նշան իր մեծագույն հարգանքի ու անկեղծ խոնարհումի՝ խնդրում էր ընդունել Այ. Դազարի Ավադեմիայի հուշամեդալը: Ելույթները ընդմիջվում էին համերգային զոդտրիկ կատարումներով:

Դանդիտությունը եզրափակեց հորեյարի ելույթը՝ համեմատելով նորը հուժմորով, հոգեպարար անկեղծությամբ, ջերմ զգացողություններով ու ազնիվ ինքնախոստովանանքով: «Ես սիրում եմ Գյումրին, առանձնակի սեր ու զորովանք եմ տածում գյումրեցիների նկատմամբ, այստեղ զգում եմ այն ջերմությունը, որ գրեթե ոչ մի տեղ այդպես չեմ զգում: Շատ եմ ուզում, որ Գյումրիում ծաղկի իսկական գիտությունը, ամչափ ուրախ եմ, որ իմ շատ համեստ ներդրումն եմ ունեցել Գյումրիում մեր ակադեմիայի Դայազիտական կենտրոնի ստեղծման մեջ: Երազում եմ Գյումրին տեսնել վերջինիս և առաջվա նման զեղեցիկ, նաև որպես հայրենական գիտության խոշոր կենտրոն: Դեշտ է, երբ խոսում ես ուրիշի ՑԾ-ամյակի մասին, բայց երբ ինքը ես արդեն այդքան, տեսնում ես, որ չափազանց լուրջ հասակ է, և ակամա զգում ես տարիների ծանրությունը: Չմայած ես երբեք չեմ մտածում այդ մասին, ժքնարիտն ասած՝ դրա ժամանակն էլ չունեմ, երբ քայլում եմ փողոցով, երբ աշխատում եմ բուրդով ճաշում եմ, երբ քայլում եմ ընդունելության համար, և խոսքս էլ ավելի շատ սրտի խոսք է, քան մտքի, թեև ինքքան ինքս իմն գիտեմ ավելի մտքի մարդ եմ»: Միտելի գիտնականի խոսքը բազմիցս ընդհատվում էր դառնիմի ծափերով: «Ամենախմաստուն մարդը նա է, վերջում ասաց հորեյարը, - ով երբեք չի մտածում մահվան մասին ու կյանքն ընդունում է այնպես, ինչպես կա», և անսալով դառնիմի խնդրանքին՝ իր խոսքն ավարտեց պա-

տանեկության տարիներին իր գրած մի քանի զոդտրիկ բանաստեղծությունների մատուցմամբ, որից ստորև ներկայացվում է մի կտոր:

Երբ հեռացա ես տնից,
Ճանապարհի մեղմ փոշում
Նայում էրն ինձ հեզվրց
Մի պառավ մտոյ ու մի շուն:
Մայրս լալիս էր կամաց,
Շունը պոչն էր պտտում,
Այնպես ցուրտ էր իմ դիմաց,
Այնպես լուռ էր ու տրտում:
Կղանտ՝ մ ես նորից հետ,
Կտեսնե՞մ իմ մորը ծեր,
Թե՞ կննջեմ առհավետ
Աղաչանքին անտարբեր:
Եվ՛ շենի մոտ հեռավոր,
Ճանապարհի մեղմ փոշում
Ինձ կսպասեն առեավետ
Մի պառավ մայր ու մի շուն:

Դամոզված ենք՝ հանդիսության մասնակիցները դեռ երկար կիիշեն գյումրիական այդ զարմանալիս երեկոն՝ լի ամենաջերմ զգացողություններով, վաստակաշատ գիտնականի ու մարդու հետ հարողովելու մեծ ու զեղեցիկ խորհուրդով:



2000 թվականը ԵՊՀ կենտրոնի զործունեության մեջ նշանավորվեց նաև մի շարք հեռաքրքիր ու բովանդակալից գիտական բանավեճերի և սեմինարների անցկացումով, որոնց մասնակցեցին նաև Գյումրու և մտյաքաղաքի բազմաթիվ հայազետներ ԳԱԱ համակարգի ինստիտուտներից և բարձրագույն ուսումնական հաստատություններից: Դրանք թեմատիկ լայն ընդգրկում ունեին և գերազանցապես շոշափում էրն Երևանի տղագրություն, պատմության, հնագիտության, երաժշտական արվեստի, բանասիրության ու շազարավ հարցեր:

Առանձնակի հետաքրքրությամբ լսվեցին և քննարկվեցին ԳԱԱ ԴԱԻ ավ. գիտաշխատող, ս. գ. թ. ժեմյա Խաչատրյանի «Դայ պարային մշակույթը և ծեսը» (մարտ), Երևանի հայագիտակտն հետազոտությունների կենտրոնի տնօրեն, բ. գ. թ. Սերգեյ Դայրապետյանի «Մեծ եղեցիի պատմական դասերը» (ապրիլ), ԴՄԻ առաքատար գիտաշխատող, «Բատան» էթնոմշակութաբանական կենտրոնի նախագահ ս. գ. թ. Յուրի Մկրտումյանի «Մշակույթ և քաղաքակրթություն հասկացությունները արդի գիտության մեջ» (ապրիլ), ԵՊՀ կենտրոնի ավ. գիտաշխատող ս. գ. թ. Սարգիս Պետրոսյանի «Տեղանվանարանական տվյալներ ՈՒրարտուում հայ էթնոսի առկայության մասին» (մայիս), ավ. գիտաշխատող Կարինե Բազեյտնի «Տնայնագոթոմության և արհեստների տեսակտրար կշիռը Երևանի հայերի տնտեսական կենցաղում», գիտաշխատող Գրիգոր Աղանյանի «Ալեքսանդրապոլի համքարությունների առանձնահատկությունները» (հունիս), ավ. գիտաշխատող, հ. գ. թ. Կարինե Սահակյանի «Ժողովրդական պատկերացումների էթնո-հոգեբանական դրսևորումները եետաղետյան շրջանի երազներում» (հուլիս), գիտաշխատող Ռոզա Դովրանցիսյանի «Ժողովրդական խաղիկների նորոյա գրառումներ Երևանում» (օգոստոս), ավ. գիտաշխատող Դասմիկ Ափրիյանի «Երևանի ժողովրդական նվագալտները» (սեպտեմբեր), գիտաշխատող Դասմիկ Ստեփանյանի «Դայ Առաքելական սուրբ

եկեղեցու Մեծի Պահոց շրջանի ծխական երաժշտության բնորոշիչները» (մայիս), «Շիրակի միջնադարյան երաժշտությունը ըստ պատմական աղբյուրների» (սեպտեմբեր), ավ. գիտաշխատող Համազասպ Խաչատրյանի «Բանի ամտիկ բնակավայրի առաջին տեղամասի մոնումենտալ կառույցի պորտալը» (հոկտեմբեր) օհտաշխատող Լարիսա Եգանյանի «Բենիամինի ամտիկ ուսման արտադրատի պեղումները» (հոկտեմբեր), գիտաշխատող Արտաշես Բոյաջյանի «Լենինականի սոցիալ-տնտեսական տարածքային նախապայմանները 1920-60-ական թթ.» (դեկտեմբեր), Արաքս Մարգարյանի «Գեղարվեստական զրականությունը որպես ազգագրական սկզբնաղբյուր» (դեկտեմբեր) և այլ գիտական հանգամանակի գեկուցումներն ու հաղորդումները:



2000 թ. նոյեմբերի 13-ին Գյումրու մանկավարժական ինստիտուտում անցկացվեցին Գյումրու քաղաքապետարանի, 77 ԳԱԱ Պատմության ինստիտուտի, ԳԱԻ սպորտային մանկավարժության և պատմության ամբիոնների համատեղ նախաձեռնած «Պատմական հիշողություն և ազգային գաղափարախոսություն» թեմայով գիտական ընթերցումները: Պատմական ժամարտության վերականգնման, պատմության մեջ եղած բացթողումների վերացման անհրաժեշտությունը, հայրենիքին իրենց գործով ու կյանքով անձնուրաց ծառայած մարդկանց արժանին մատուցելու կարևորություն էին պայմանավորել այս միջոցառման անցկացումը, որը նպատակ էր հետապնդում համեստ մի ներդրում ունենալ ազգային գաղափարախոսության ձևավորման գործում:

Գիտական ընթերցումներին նախորդել էին կազմակերպական և գիտահավաքչական աշխատանքներ, որոնց նախաձեռնողը դարձավ ԳԱԻ սպորտային մանկավարժության ամբիոնի վարիչ, դոցենտ Ռ. Պապոյանը, որը երկար տարիներ զբաղվում էր Գյումրու հետ սերտորեն առնչված մի շարք նշանավոր գործիչների մասին նյութերի հավաքմամբ: «Կուսակցի» քաղաքային թերթի 2000թ. թիվ. 23-ում լույս տեսավ Ռ. Պապոյանի «Բաց նամակ Գյումրու քաղաքապետ Վարդան Ղուկասյանին» թղթակցությունը, որտեղ արժևորվում էր նշանավոր հայրերի Պաղվալի Վաղոյի (Վաղարշակ Արևսայան), Նիկոլայ Ղորղանովի, Դավիթյանի Մազմանովի և Վահան Զերազի գործունեությունը՝ առաջարկում հավերժացնել նրանց հիշատակը: Ռ. Պապոյանի հոգվածին արժանացնեցին նաև ժազումով Գյումրեցի մի շարք նշանավոր մտավորականներ (77 ԳԱԱ ակադեմիկոս Ա. Համբարձումյանը, պրոֆեսորներ Ֆ. Ղազարյանը, Է. Սահակյանը, Է. Էյբակյանը, և այլոք) և ԳԱԻ պատմության ամբիոնը: Քաղաքապետարանին կից ստեղծվեց «Հիշողություն» պատմա-շակութային հանձնաժողով, որի անդամները 77 թանգարաններում և արխիվներում գիտական պրպտումներ կատարեցին: Մասնադիտական օժանդակության խնդրանքով հանձնաժողովը դիմեց 77 ԳԱԱ Պատմության ինստիտուտին, ԵՊՀ համալսարանին, ֆակուլտետներին, Հայաստանի ազգագրության պետական թանգարանին: Գյումրու քաղաքապետի հրամանով պատրաստվեցին հուշակախտակներ և գիտական ընթերցումների բացման օրը ամրագրվեցին այն տներին

պատերին, որտեղ ապրել էին ազգային նշանավոր այս գործիչները:

Գիտական ընթերցումներում ողջունյի խոսքով հանդես եկան Գյումրու քաղաքապետ Վ. Ղուկասյանը և ԳԱԻ ամբիոնի պրոֆեսոր Գ. Հարությունյանը, որոնք կարևորեցին միջոցառման գիտական և հասարակական հնչեղությունը շեշտելով ազգային գաղափարախոսության ձևավորման գործում նմանատիպ միջոցառումների անհրաժեշտությունը: Կար պատմության ամբիոնի վարիչ դոցենտ Ե. Վարդանյանն իր բացման խոսքում մասնավորապես նշեց, որ. «Արդի հայկական պետականության կայացումը տեղի է ունենում հասարակական-քաղաքական արժեքների և գաղափարների գերբարդ վերարժեքավորման պայմաններում: Խախտվել է սերունդների պատմական հաջորդականությունը, կորսվում են ազգային ժամարտարժեքները և տեղի է ունենում մեր ազգային հոգեկերտվածքին, անհարիր ապակողմնորոշում, որն առաջին հերթին բացասաբար է անդրադառնում աժող սերնդի դաստիարակության վրա»:

77 ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Գ. Ավետիսյանը «Ե. Ղորղանյանի ջազմաքաղաքական գործունեությունը» գեկուցման սկզբում քարծր գնահատեց «Հիշողություն» պատմա-շակութային հանձնաժողովի նախաձեռնությունը, հատկապես ընդգծելով թեմայի ճիշտ ու ժամանակին ընտրությունը. «... Մեր Գյումրեցի գործընկերները ճիշտ են դրել հարցը, որովհետև առանց պատմական հիշողության չի կարող լինել ազգային գաղափարախոսություն, և այդ միասնությանը պետք է լինի, որպեսզի կարողանանք հասկանալ, թե որտեղից և ինչու ենք եկել, ուր և ինչու ենք գնում»: Այնուհետև, անհամաբանը հանգամանակորեն ներկայացրեց Ղորղանյանների ազգատոհմի պատմությունը, որն սկսվում է դեռևս XVIII դարի կեսերից, խոսեց ռուսական բանակում նրանց զորամաս քարծր դիրքի, քաջության և ազգանվեր գործունեության մասին:

«Հայոց ազգային բանակը 1918-1920 թ.թ.» գեկուցմամբ հանդես եկավ 77 ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտաշխատող պ. գ. թ. Մ. Կարապետյանը, որն ընդհանուր գծերով բնութագրեց հայոց ազգային բանակի կայացումն ու հրամանատարական կազմի ձևավորումը, նշելով, որ «... մոտավոր հաշվարկներով, 77 բանակում 1918-1920թթ. ծառայել են 20-ից ավելի գեներալներ, 60-ից ավելի գեներալներ, 2000 սպաներ: Դրանք բոլորն էլ ռուսական զինվորական ուսումնարաններ, ակադեմիաներ ավարտած կարգեր էին և ունեին մարտական հարուստ փորձ»:

77 ԳԱԱ Պատմության ինստիտուտի փոխտնօրեն, պ. գ. թ. Ա. Մելքոնյանն իր ելույթում անդրադարձավ հայոց ազգային խորհրդանիշերի, բանակի և պետականության պաշտամունքի խղճի դիրքերին՝ հատկապես պատմական հիշողության և ազգային գաղափարախոսության տեսանկյուններից:

«Սկառտապետ Վ. Զերազի որբախնամ գործունեությունը Ալեքսանդրապոլում» հաղորդմամբ հանդես եկավ ԳԱԻ սպորտային մանկավարժության ամբիոնի վարիչ, դոցենտ Ռ. Պապոյանը, որը ներկայացրեց հայ սկառտական շարժման հիմնադիր Վ. Զերազի արզասաբեր աշխատանքը քաղաքի որսանոցներում: Հատկապես շեշտվեց նրա կողմից ուղևորականության և մարմնակրթական դաստիարակության առաջադեմ մեթոդների և

սկատուտական «բարձագիր-բարձրացրու» կարգախոսի արդյունավետ կիրառությունը:

Բանասիրության դրկտոր Գ. Գևորգյանը «Պաղվալի Վաղոն հայ ազատագրական շարժման գործիչ» թեմայով զեկուցման մեջ անդրադարձավ Վաղարշակ Մինասյանի սիրամբին և կարծատն կյանքի դրվագներին՝ մեքքերելով հատվածներ իր հեղինակած վեպից:

ԳՄԻ պատմության ամբիոնի դասախոս Ա. Լիկողոսյանը «Ալեքսպոլը և հայ ազատագրական շարժումը XX դարի սկզբին» զեկուցման մեջ, կանգ առավ հիշյալ ժամանակաշրջանում Ալեքսանդրապոլում ծնավորված ազատագրական և քնոտ ֆիական խմբակների փոխգործունեության և դրանցում մեծ ավանդ ունեցող գործիչներ Գարեգին Խաժակի, Գեորգի Գյուրջիևի և այլոց ազգանվեր գործունեության վիա:

ԳՄԻ պատմության ամբիոնի դասախոս, ՇԳԿ գիտաշխատող Գ. Աղանյանն անդրադարձավ հայ նշանավոր գորապետեր Դանիել և Պողոս Բեկ-Փիրումյանների կյանքի ալեքսպոլյան շրջանի մանրամասներին և նորահայտ փաստերին:

Բանահավաք-ազգագրագետ, վաստակավոր ուսուցիչ Գ. Իկիլիկյանը ներկայացրեց տարիների ընթացքում իր կողմից հավաքված արժեքավոր նյութերը գնդապետ Գ. Սազմանովի կյանքի և ուղմական գործունեության վերաբերյալ:

Գ. Գ. ԱՄԱ Պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Գ. Ավետիսյանն առաջարկեց «Դիշողություն» պատմամշակութային հանձնաժողովին շարունակել նման գիտական ընթերցումների կազմակերպումը՝ դարձնելով դրանք ավանդական:



2000թ նոյեմբերի 17-19-ին Գյումրիում Արվեստների ինստիտուտի հյուրընկալ հարկի տակ զուամարվեց «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական չորրորդ գիտաժողովը, որի կազմակերպիչը ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնն էր:



Գիտաժողովի կազմակերպումը հովանավորել էին Շիրակի մարզպետարանը, Դայ Առաքելական եկեղեցու Շիրակի հոգևոր թեմի և Արևելյան Եվրոպայի Կաթողիկե Դայոց եկեղեցու առաջնորդարանները, մասնավոր ձեռնարկություններ և անհատ անձինք:

Արդեն ավանդական դարձած, երկու տարին մեկ զուամարվող և հայագետների լայն շրջանում պատշաճ հեղինակություն ու բարի համբավ ունեցող այս մեծամասշտաբ հայագիտական ստուգատեսը ծնունդ առավ 1994թ. Շիրակի երկրագիտական թանգարանի երիտասարդ գիտաշխատողների անմիջական քանքերով: Մասնակցեցին շուրջ 100 գիտնականներ և պատվավոր հյուրեր, իսկ ներկայացված 55 հաղորդումներում ամփոփված էին պատմական զավառին նվիրված հայագիտական նորագույն հետազոտությունների արդյունքները:

1996թ կայացած երկրորդ գիտաժողովն առավել ներկայացուցական էր. 75 զեկուցումներով գիտական զննատանքի արժանացան 1994-1996 թ. ընթացքում Շիրակի հին ու նոր պատմու-

թյան, հնագիտության, ճարտարապետության ու արվեստների և հայագիտության այլ ոլորտներում Դայաստանում կատարված ուսումնասիրությունները: Բացահայտելով մարգում հայագիտական հետազոտությունների արդի մակարդակը, տեղի գիտական ներուժի իրական հնարավորությունները՝ այս գիտաժողովները նաև նպաստեցին 1997թ. աշնանը Գյումրիում ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի տեղեղմանը, որն էլ ստանձնեց հաջորդ գիտաժողովների կազմակերպման պատասխանատվությունը:

ՇՊՄԺ հանրապետական երրորդ գիտաժողովը զուամարվեց 1998թ. և ի մի բերեց հետադետյան տասնամյակի ընթացքում Շիրակի հոգևոր և նյութական մշակույթի մասունքների ուսումնասիրությունների արդյունքները: Այն խիստ ներկայացուցական էր (60-ից ավելի գիտական զեկուցումներ և բազմաթիվ հյուրեր) և ակնառու երկույթ ոչ միայն Գյումրու գիտական ու մշակութային կյանքում:

Չորրորդ հանրապետական գիտաժողովը (2000թ նոյեմբեր) կոչված էր հանրագումարելու Շիրակին վերաբերող վերջին տարիների հայագիտական ձեռքբերումները մեր երկրում, ինչպես նաև հստակեցնելու նման հետազոտությունների հիմնական ուղղությունները 21-րդ դարաշեմին և նպաստելու գիտահետազոտական համալիր ծրարագրի մշակմանը:

Կազմհանձնաժողովին, հաջողվեց լավագույնս նախապատրաստվել այդ կարևոր գիտական ստուգատեսին, մշակել և գիտաժողովի օրերին իրագործել ոչ սրայս գիտական, այլև ճանաչողական-մասսայական հետաքրքիր միջոցառումներ, լուծել մասնակիցների և հյուրերի սննդի և հանգստի թուր խնդիրները, ինչպես նաև նախապես իրատարակել գիտաժողովին ներկայացված աշխատանքների համահավաք ժողովածուն, ուր տեղ են գտել ԳԱԱ ՇԳԿ կենտրոնի, Դնագիտության և ազգագրության, Պատմության, Արվեստի, Արևելագիտության ինստիտուտների, Երևանի պետական և ճարտարապետաշինարարական, Գյումրու «Պրոգրես» համալսարանների, Երևանի կինոյի և թատրոնի ինստիտուտի Գյումրու մասնամյուղի, Գյումրու մանկավարժական ինստիտուտի, Դայկական հուշարժանների համտիավաքի խմբագրության, Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի, Գյումրու «Կումայրի» տրդելոց-թանգարանի, Շիրակի երկրագիտական թանգարանի գիտաշխատողների ավելի քան 50 զեկուցումների ամփոփ հիմնադրույթները:

ՇՊՄԺ հանրապետական չորրորդ գիտաժողովն բացեցին համանախագահներ՝ Շիրակի մարզպետ Ֆ. Փիրումյանը և Դայ Առաքելական եկեղեցու Շիրակի հոգևոր թեմի առաջնորդական տեղապահ, ծայրագույն վարդապետ Մ. Արապախյանը, մասնակիցներին ողջունեցին և արգասավոր աշխատանք մաղթեցին ԴՄԻ տնօրեն, պատմագիտության դրկտոր Ա. Զալանթարյանը, ՇԳԿ կենտրոնի գիտքարտուղար Գ. Խաչատրյանը և ուրիշներ: Այս գիտաժողովը երեք օր աշխատեց մի քանի մասնամյուղերով՝ զեկուցումների ունկնդրումն ու բուժնքննարկումները ընդմիջելով նաև մարզի տարածքում պատմական, հնագիտական, ազգագրական հուշարժանների (Մարմաշենի վանական համալիր, Բենիամինի անտիկ դամբարանադաշտ և այլն) այցելություններով:

ենեռեցու Մեծի Պահոց շրջանի ծխական երաժրչտության բնորոշիչները» (Նախա), «Շիրակի միջնադարյան երաժշտությունը ըստ պատմական աղբյուրների» (սեպտեմբեր), ավ. գիտաշխատող Համազասպ Խաչատրյանի «Բենիամինի անտիկ բնակավայրի առաջին տեղամասի մոնումենտալ կառույցի պորտալը» (հոկտեմբեր) գիտաշխատող Լարիսա Եգանյանի «Բենիամինի անտիկ ուսման արհեստի պեղումները» (հոկտեմբեր), գիտաշխատող Արտաշես Բոյաջյանի «Լենինականի սոցիալ-տնտեսական տարածքաւիճակը 1920-60-ական թթ.» (դեկտեմբեր), Արաքս Սարգսյանի «Գեղարվեստական գրականությունը որպես ազգագրական սև ժամանակակից» (դեկտեմբեր) և այլ գիտական հանգամանակի զեկուցումներն ու հաղորդումները:



2000 թ. նոյեմբերի 13-ին Գյումրու մանկավարժական ինստիտուտում անցկացվեցին Գյումրու քաղաքապետարանի, ԴԴ ԳԱԱ Պատմության ինստիտուտի, ԳԱԻ սպորտային մանկավարժության և պատմության ամբիոնների համատեղ նախաձեռնած «Պատմական հիշողություն և ազգային գաղափարախոսություն» թեմայով գիտական ընթերցումները: Պատմական ճշմարտության վերականգնման, պատմության մեջ եղած բացթողումների վերացման անհրաժեշտությունը, հայրենիքին իրենց գործով ու կյանքով անձնուրաց ծառայած մարդկանց արժանին մատուցելու կարևորությունն էին պայմանավորել այս միջոցառման անցկացումը, որը նպատակ էր հետապնդում համեստ մի ներդրում ունենալ ազգային գաղափարախոսության ձևավորման գործում:

Գիտական ընթերցումներին նախորդել էին կազմակերպական և գիտահավաքչական աշխատանքներ, որոնց նախաձեռնողը դարձավ ԳԱԻ սպորտային մանկավարժության ամբիոնի վարիչ, դոցենտ Ռ. Պապոյանը, որը երկար տարիներ զբաղվում էր Գյումրու հետ սերտորեն առնչված մի շարք նշանավոր գործիչների մասին նյութերի հավաքմամբ: «Կուսակցի» քաղաքային թերթի 2000թ. թիվ. 23-ում լույս տեսավ Ռ. Պապոյանի «Բաց նամակ Գյումրու քաղաքապետ Վարդան Դուկասյանին» թղթակցությունը, որտեղ արժեքավոր էր նշանավոր հայորդիներ Պարվալի Վաղոյի (Վաղարշակ Մինասյան), Նիկոլայ Ղուբանովի, Դավիթյան Մազմանովի և Վահան Զերազի գործունեությունը՝ առաջարկում հավերժացնել նրանց հիշատակը: Ռ. Պապոյանի հորվածին արժանապատիվ էր նաև ժողովում Գյումրեցի մի շարք նշանավոր մտավորականներ (ԴԴ ԳԱԱ ակադեմիկոս Ս. Համբարձումյանը, պրոֆեսորներ Զ. Ղազարյանը, Է. Սահակյանը, Է. Էլբակյանը, և այլոք) և ԳԱԻ պատմության ամբիոնը: Քաղաքապետարանին կից ստեղծվեց «Հիշողություն» պատմաճշմունքային հանձնաժողով, որի անդամները ԴԴ թանգարաններում և արխիվներում գիտական պրպտումներ կատարեցին: Մասնագիտական օժանդակության խնդրանքով հանձնաժողովը դիմեց ԴԴ ԳԱԱ Պատմության ինստիտուտին, ԵՊՀ համապատասխան ֆակուլտետներին, Հայաստանի ազգագրության պետական բանգարանին: Գյումրու քաղաքապետի հրամանով պատրաստվեցին հուշատախտակներ և գիտական ընթերցումների բացման օրը ամրացվեցին այն տներին

պատերին, որտեղ ապրել էին ազգային նշանավոր այս գործիչները:

Գիտական ընթերցումներում ողջունյի խոստով հանդես եկան Գյումրու քաղաքապետ Վ. Ղուկասյանը և ԳԱԻ ռեկտոր պրոֆեսոր Դ. Հարությունյանը, որոնք կարևորեցին միջոցառման գիտական և հասարակական հնչիղությունը շեշտելով ազգային գաղափարախոսության ձևավորման գործում նմանատիպ միջոցառումների անհրաժեշտությունը: ԳԱԻ պատմության ամբիոնի վարիչ դոցենտ Ե. Վարդանյանն իր բացման խոսքում մասնավորապես նշեց, որ. «Արդի հայկական պետականության կայացումը տեղի է ունենում հասարակական-քաղաքական արժեքների և գաղափարների գերադր վերարժեքավորման պայմաններում: Խախտվել է սերունդների պատմական հաջորդականությունը, կորսվում են ազգային ճշմարիտ արժեքները և տեղի է ունենում մեր ազգային հոգեկերտվածքին անհարիր ապակողմնորոշում, որն առաջին հերթին բացասաբար է անդրադարձնում աճող սերնդի գաստիարակությանը»:

ԴԴ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Դ. Ավետիսյանը «Ն. Ղորղանյանի ճազմաքաղաքական գործունեությունը» զեկուցման սկզբում բարձր գնահատեց «Հիշողություն» պատմաճշմունքային հանձնաժողովի նախաձեռնությունը, հատկապես ընդգծելով թեմայի ճիշտ ու ժամանակին ընտրությունը. «... մեր գյումրեցի գործընկերները ճիշտ են դրել հարցը, որովհետև առանց պատմական հիշողության չի կարող լինել ազգային գաղափարախոսություն, և այդ միասնությունը պետք է լինի, որպեսզի կարողանանք հասկանալ, թե որտեղից և ինչու ենք եկել, ուր և ինչու ենք գնում»: Այնուհետև, առնչված մասնաբանը հանգամանախորեն ներկայացրեց Ղորղանյանների ազգատոհմի պատմությունը, որն սկսվում է դեռևս XVIII դարի կեսերից, խոսեց ռուսական բանակում նրանց գրաված բարձր դիրքի, քաջության և ազգանվեր գործունեության մասին:

«Հայոց ազգային բանակը 1918-1920 թ.թ.» զեկուցմամբ հանդես եկավ ԴԴ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտաշխատող պ. գ. թ. Ս. Վարապետյանը, որն ընդհանուր գծերով բնութագրեց հայոց ազգային բանակի կայացումն ու հրամանատարական կազմի ձևավորումը, նշելով, որ «... մոտավոր հաշվարկներով, ԴԴ բանակում 1918-1920թթ. ծառայել են 20-ից ավելի զեներալներ, 60-ից ավելի զնդապետներ, 2000 սպաներ: Դրանք բոլորն էլ ռուսական զինվորական ուսումնարաններ, ակադեմիաներ ավարտած կարգեր էին և ունեին մարտական հարուստ փորձ»:

ԴԴ ԳԱԱ Պատմության ինստիտուտի փոխտնօրեն, պ. գ. թ. Ա. Մելքոնյանն իր ելույթում անդրադարձավ հայոց ազգային խորհրդանիշերի, բանակի և պետականության պաշտամունքի խընդիրներին՝ հատկապես պատմական հիշողության և ազգային գաղափարախոսության տեսանկյուններից:

«Սկառտապետ Վ. Զերազի որբախնամ գործունեությունը Ալեքսանդրապոլում» հաղորդմամբ հանդես եկավ ԳԱԻ սպորտային մանկավարժության ամբիոնի վարիչ, դոցենտ Ռ. Պապոյանը, որը ներկայացրեց հայ սկառտական շարժման հիմնադիր Վ. Զերազի արգասաբեր աշխատանքը քաղաքի որբանոցներում: Հատկապես շեշտվեց նրա կողմից հուշատախտակների և մարմնակրթական դաստիարակության առաջադեմ մեթոդների և

սկառուտական «բարձագիր-բարձրացրու» կարգախոսի արդյունավետ կիրառությունը:

Բանասիրության դոկտոր Գ. Գալստյանը «Պաղվալի Վաղոն հայ ազատագրական շարժման գործիչ» թեմայով զեկուցման մեջ անդրադարձավ Վաղարշակ Արմատյանի սիրամանրին և կարծատն կյանքի դրվագներին՝ մեքերերելով հատվածներ իր հեղինակած վեպից:

ԳԱԻ պատմության ամբիոնի դասախոս Ա. Լիկողոպյանը «Ալեքսանդր և հայ ազատագրական շարժմանը XX դարի սկզբին» զեկուցման մեջ կանգ առավ հիշյալ ժամանակաշրջանում Ալեքսանդրապոլում ձևավորված ազատագրական և թոսոֆիական խմբակների փոխգործունեության և դրանցում մեծ ավանդ ունեցող գործիչներ Գարեգին Խաժակի, Գեորգի Գյուրջիևի և այլոց ազգանվեր գործունեության վրա:

ԳԱԻ պատմության ամբիոնի դասախոս, ՀԳԿ գիտաշխատող Գ. Աղանյանն անդրադարձավ հայ նշանավոր գորպայետեր Դանիել և Պողոս Բեկ-Փիրումյանների կյանքի այնքալույս շրջանի մանրամասներին և նորահայտ փաստերին:

Բանահավաք-ազգագրագիտ, վաստակավոր ուսուցիչ Գ. Իկիլիկյանը ներկայացրեց տարիներ ընթացքում իր կողմից հավաքված արժեքավոր նյութերը գնդապետ Գ. Սազմանովի կյանքի և ռազմական գործունեություն վերաբերյալ:

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Գ. Ավետիսյանն առաջարկեց «Հիշողություն» պատմամշակութային հանձնաժողովին շարունակել նման գիտական ընթերցումների կազմակերպումը՝ դարձնելով դրանք ավանդական:



2000թ նոյեմբերի 17-19-ին Գյումրիում Արվեստների ինստիտուտի հյուրընկալ հարկի տակ զուամարվեց «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական չորրորդ գիտաժողովը, որի կազմակերպիչը ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնն էր:



Գիտաժողովի կազմակերպումը հովանավորիչ էին Շիրակի մարզպետարանը, Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի հոգևոր թեմի և Արևելյան եվրոպայի Կաթողիկոս Հայոց եկեղեցու առաջնորդարանները, մասնավոր ժեռնարկություններ և անհատ անձինք:

Արդեն ավանդական դարձած, երկու տարին մեկ զուամարվող և հայագետների լայն շրջանում պատշաճ հեղինակություն ու բարի համբավ ունեցող այս մեծամասշտաբ հայագիտական ստուգատեսը ծնունդ առավ 1994թ. Շիրակի երկուս-գիտական թանգարանի երիտասարդ գիտաշխատողների ամբիջական քաներով: Մասնակցեցին շուրջ 100 գիտնականներ և պատվավոր հյուրեր, իսկ ներկայացված 55 հաղորդումներում ամփոփված էր պատմական գավառին նվիրված հայագիտական նորագույն հետազոտությունների արդյունքները:

1996թ կայացած երկիրորդ գիտաժողովն առավել ներկայացուցական էր. 75 զեկուցումներով գիտական գնահատանքի արժանացան 1994-1996 թ. ընթացքում Շիրակի հին ու նոր պատմու-

թյան, հնագիտության, ճարտարապետության ու արվեստների և հայագիտության այլ ոլորտներում Հայաստանում կատարված ուսումնասիրությունները: Բացահայտելով մարզում հայագիտական հետազոտությունների արդի մակարդակը, տեղի գիտական ներուժի իրական հնարավորությունները՝ այս գիտաժողովները նաև նպաստեցին 1997թ. աշնանը Գյումրիում ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ստեղծմանը, որն էլ ստանձնեց հաջորդ գիտաժողովների կազմակերպման պատասխանատվությունը:

ՀԳՄԺ հանրապետական երրորդ գիտաժողովը զուամարվեց 1998թ. և ի միջոցին հետադեռյալ տասնամյակի ընթացքում Շիրակի հոգևոր և նյութական մշակույթի մասունքների ուսումնասիրությունների արդյունքները: Այն խիստ ներկայացուցական էր (60-ից ավելի գիտական զեկուցումներ և բազմաթիվ հյուրեր) և ակնառու երեկույթ ոչ միայն Գյումրու գիտական ու մշակութային կյանքում:

Չորրորդ հանրապետական գիտաժողովը (2000թ նոյեմբեր) կոչված էր հանրագումարելու Շիրակի վերաբերող վերջին տարիների հայագիտական ձեռքբերումները մեր երկրում: Ինչպես նաև հստակեցնելու նման հետազոտությունների հիմնական ուղղությունները 21-րդ դարաշեմին և նպաստելու գիտահետազոտական համալիր ծրագրի մշակմանը:

Կազմհանձնաժողովին, եաջողվեց լավագույնս նախապատրաստվել այդ կարևոր գիտական ստուգատեսին, մշակել և գիտաժողովի օրերին իրագործել ոչ միայն գիտական, այլև ճանաչողական-մասսայական հետաքրքիր միջոցառումներ, լուծել մասնակիցների և հյուրերի սննդի և հանգստի բոլոր խնդիրները, ինչպես նաև նախապես հրատարակել գիտաժողովին ներկայացված աշխատանքների համահավաք ժողովածուն, ուր տեղ են գտել ԳԱԱ ՀՀ կենտրոնի, Հնագիտության և ազգագրության, Պատմության, Արվեստի, Արևելագիտության ինստիտուտների, Երևանի պետական և ճարտարապետաշինարարական, Գյումրու «Պրոգրես» համալսարանների, Երևանի կինոյի և թատրոնի ինստիտուտի Գյումրու մասնամյուղի, Գյումրու մասկավարժական ինստիտուտի, Հայկական հուշարձանների համահավաքի խմբագրության, Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի, Գյումրու «Կուսակառուց» արգելոց-թանգարանի, Շիրակի երկրագիտական թանգարանի գիտաշխատողների ավելի քան 50 զեկուցումների ամփոփ եիմնադրույթները:

ՀԳՄԺ հանրապետական չորրորդ գիտաժողովն ընթացին համանախագահներ՝ Շիրակի մարզպետ Ֆ. Փիրումյանը և Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի հոգևոր թեմի առաջնորդական տեղապահ, ծայրագույն վարդապետ Մ. Աբախանյանը, մասնակիցներին ողջունեցին և արգասավոր աշխատանք մաղթեցին ՀԱԻ տնօրեն, պատմագիտության դոկտոր Ա. Քալանթարյանը, ՀՀ կենտրոնի գիտաշխատող Գ. Խաչատրյանը և ուրիշներ: Այս գիտաժողովը երեք օր աշխատեց մի քանի մասնամյուղերով՝ զեկուցումների ունկնդրումն ու թույլ ընկալումները ընդմիջելով նաև մարզի տարածքում պատմական, հնագիտական, ազգագրական հուշարձանների (Մարմաշենի վանական համալիր, Բենիամինի անտիկ դամբարանադաշտ և այլն) այցելություններով:

Գիտաժողովի շրջանակներում կայազավ նաև նրա մասնակիցների, Գյումու մտավորականության ու ՁԼՄ-ներկայացուցիչների համատեղ «կլոր սեղան», որտեղ քննարկվեցին քաղաքում մշակույթի պահպանման, գիտության կազմակերպման, երիտասարդության աջակցայի, կյանքի ծանրագույն պայմաններով թելադրված արտագաղթի և այլ հարցեր: Գիտաժողովի հյուրերի և մասնակիցների մի մեծ իւումբ հյուրընկալվեց Շիրակի մարզպետի կողմից, որը նրանց իրազեկեց մտրզում և հատկապես Գյումրիում վերականգնողական աշխատանքների ընթացքի, գերհնդիդների ու հրատապ լուծում պահանջող բազմաթույթ հարցերի մասին, ինչպես նաև ի մոտո տեղեկացավ գիտաժողովի արյունքներին:

Գիտաժողովի վերջին լիազուճար նիստում ամփոփվեց մասնաճյուղերի աշխատանքը, իրատեսական գնահատական տրվեց հանրապետությունում շիրակագիտության արգի վիճակին, այս բնագավառում Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, երկագիտական թանգարանի և մյուս գիտական օջախների աշխատանքի արդյունքներին, ճշգրտվեց գիտաժողովի նիստերում ընթերցված ղեկուցումներից այն ամենաարժեքավորների ցանկը, որոնք ծավալուն հողվածների ծնով տպագրության երաշխավորվեցին ՇՀԳ կենտրոնի «Գիտական աշխատություններ» ժողովածուի երրորդ հատորում, նաև որոշվեց ՇՊՄԺ հանրապետական հինգերորդ գիտաժողովի անցկացման ժամկետը՝ հոկտեմբեր, 2002թ.: